# «ՇԵՆՔԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» N ՌՊ-01-2025

ք. Երևան 21 մայիսի 2025թ.

Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող Պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ «Նվիրատու»), ի դեմս Նվիրատուի կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Մարո Մարգարյանի, մի կողմից և «Ռիփաբլիք Պլազա» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Նվիրառու»), ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Դավիթ Բաղդասարյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման (այսուհետ՝ «Որոշում») պահանջների և Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի 01 բաժնի 03 խմբի 03 դասի 1079 Պետական գույքի կառավարում Ծրագրի «Շենքերի արտաքին լուսավորության ապահովման ծառայություններ» 11018 դասիչով միջոցառման շրջանակներում, Նվիրառուի կողմից 2025 թվականին «Շենքերի արտաքին լուսավորության ապահովման ծառայություններ» միջոցառման (այսուհետ՝ «Լուսավորության ապահովում») իրականացման նպատակով, Նվիրատուն

սեփականության իրավունքով Նվիրառուին անհատույց հատկացնում է 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով դրամաշնորհ (ներառյալ ԱԱՀ-ն)՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով («Վճարման ժամանակացույց») սահմանված ժամկետներում և Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով («Աշխատանքների կատարման ժամանակացույց») սահմանված ժամկետներում:

**1.2.** Լուսավորության ապահովումը իրականացվելու է սույն պայմանագրի N 1 հավելվածի («Տեխնիկական բնութագիր») պահանջներին և N 5 հավելվածի ծախսային նախահաշվին համապատասխան:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1.** Նվիրատուն իրավունք ունի՝

**2.1.1.** ցանկացած ժամանակ ստուգել Նվիրառուի կողմից Պահպանության իրականացման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրառուի գործունեությանը,

**2.1.2.** առանց Լուսավորության ապահովման դիմաց վճարելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել Նվիրատուին պատճառված վնասները, եթե Լուսավորության ապահովումը Նվիրառուի կողմից իրականացվում է առանց սույն պայմանագրի N 1 հավելվածով («Տեխնիկական բնութագիր») սահմանված պահանջների պահպանման, ինչպես նաև այն դեպքում, երբ անհնար է ողջամիտ ժամկետում Լուսավորության ապահովման վերստին պատշաճ իրականացումը,

**2.1.3.** չընդունել Լուսավորության ապահովման արդյունքները՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով («Տեխնիկական բնութագիր») կամ այդ Լուսավորության ապահովման իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին դրանք չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և Նվիրառուից պահանջելով վճարել սույն պայմանագրի 4-րդ կետով նախատեսված տուգանքը:

**2.2.** Նվիրատուն պարտավոր է՝

**2.2.1.** կատարել Լուսավորության ապահովման իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

**2.2.2.** ընդունել սույն պայմանագրի N 1 հավելվածի («Տեխնիկական բնութագիր») պահանջներին համապատասխան իրականացված Լուսավորության ապահովման արդյունքները՝ համաձայն Նվիրառուի կողմից ներկայացված՝ Լուսավորության ապահովման հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 4), իսկ դրանցում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Նվիրառուին,

**2.2.3.** Լուսավորության ապահովման արդյունքներն ընդունելու դեպքում Նվիրառուին վճարել սույն պայմանագրով սահմանված գումարները:

**2.3.** Նվիրառուն իրավունք ունի՝

**2.3.1.** կատարված ծառայությունների կամ դրանց որևէ մասի արդյունքը Նվիրատուի կողմից ընդունվելու դեպքում՝ նրանից պահանջելու վճարել Նվիրառուին հասանելիք գումարները,

**2.3.2.** Նվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել Նվիրառուին պատճառված վնասները:

**2.4.** Նվիրառուն պարտավոր է՝

**2.4.1.** իրականացնել Նվիրատուի կողմից տրամադրված գումարների հաշվառում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանրային հատվածի կազմակերպությունների համար սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան,

**2.4.2.** սույն պայմանագրով հատկացված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի՝. Միջոցառման տարեկան արդյունքները Նվիրատուի կողմից ընդունվելուց հետո Նվիրառուն Միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները

(խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026թ.-ի հունվարի 24-ը, իսկ համաձայն «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ Դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների, իսկ ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2025 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

**2.4.3.** ապահովել Աշխատանքներում առկա թերությունների վերացման նպատակով Նվիրատուի կողմից տրված ցուցումների կատարումը,

**2.4.4.** սույն պայմանագրով սահմանված կարգով Նվիրատուին ներկայացնել Աշխատանքների կատարման մասին հաշվետվություններ, իսկ Միջոցառման ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն,

**2.4.5.** սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

**2.4.6.** Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

## 3.ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

**3.1.** Յուրաքանչյուր ամսվա ավարտից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրառուն Նվիրատուին է ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում իր կողմից Լուսավորության ապահովման նպատակով կատարված աշխատանքների վերաբերյալ ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակը (հավելված N 4):

**3.2.** Նվիրատուն հանձնման-ընդունման արձանագրության օրինակները ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում, կնքում և Նվիրառուին է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ նրան է ներկայացնում Աշխատանքները կամ դրանց որևէ մասը չընդունելու պատճառաբանված գրավոր մերժում՝ մատնանշելով անհամապատասխանությունները և սահմանելով Աշխատանքների կամ դրանց որևէ մասի վերստին կատարման ողջամիտ ժամկետ:

**3.3.** Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը համարվում են Նվիրատուի կողմից ընդունված, եթե դրա հանձնման-ընդունման արձանագրությունը Նվիրառուից ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուն չի կատարում սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված գործողություններից որևէ մեկը:

**3.4.** Կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի հետ կապված վերջնահաշվարկները Կողմերի միջև կատարվում են յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով՝ համաձայն հավելված N 5-ի («Նախահաշիվ»):

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սույն պայմանագրով և Պահպանությամբ նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Նվիրառուն պարտավորվում է Նվիրատուին փոխհատուցել Աշխատանքների չկատարված մասի չափով և վճարել տուգանք՝ Աշխատանքների չկատարված մասի համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Նվիրառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Նվիրառուին վճարվելիք գումարներում:

## 5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

**5.1.** Նվիրատուն Պահպանության իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

**5.2.** Մոնիթորինգն իրականացվում է Նվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրից ծագած՝ Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր (ստորագրված ու կնքված) երկկողմ համաձայնության:

8.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի գրավոր (ստորագրված ու կնքված) երկկողմ համաձայնություններով:

8.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.4. Սույն պայմանագիրը բաղկացած է 7 էջից և 6 էջ հավելվածից, կազմված է երկու հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

## 9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրատու՝ Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ Պետական գույքի կառավարման կոմիտե, ՀՎՀՀ 02528489, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900011056943:

Նվիրառու՝ «Ռիփաբլիք Պլազա» ԲԲԸ,
ՀՎՀՀ 02901389, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան փողոց 28,
«Կոնվերս բանկ» ՓԲԸ հ/հ 19300530264400:

| Նվիրատու՝ | Նվիրառու՝ |
|---|---|
| _____ Մ. Մարգարյան | _____ Դ. Բաղդասարյան |
| Կ. Տ. | Կ. Տ. |

**Հավելված N 1**
Շենքերի արտաքին լուսավորության ապահովման
դրամաշնորհի 2025թ.-ի մայիսի 21-ի
թիվ ՌՊ-01-2025 պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Ռիփաբլիք Պլազա» ԲԲ ընկերությանը պատկանող, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված (վարչական շենք. Արհմիությունների տուն և կապի նախարարություն (պետական ցուցիչ 1.6.96.3))՝ քաղաք Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փողոց 28 հասցեում գտնվող շենքի (այսուհետ՝ Շենք) արտաքին լուսավորության ապահովում:

Դրամաշնորհի նպատակ - Շենքի էլեկտրաէներգիայի մատակարարման գծով ծախսերի ֆինանսավորում՝ ուղղված արտաքին լուսավորության ֆինանսավորմանը:

| **Նվիրատու՝** | **Նվիրառու՝** |
|---|---|
| _____ **Մ. Մարգարյան** | _____ **Դ. Բաղդասարյան** |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

**Հավելված N 2**
Շենքերի արտաքին լուսավորության ապահովման
դրամաշնորհի 2025թ.-ի մայիսի 21-ի
թիվ ՌՊ-01-2025 պայմանագրի

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | Աշխատանքների և դրանց գնահատման քանակական ցուցանիշների անվանումները | Քանակը | | |
|---|---|---|---|---|
| | | առաջին կիսամյակ | ինը ամիս | տարի |
| 1. | Լուսավորվող շենքերի քանակը հատ | 1 | | 1 |

**Նվիրատու՝**

**Մ. Մարգարյան**

**Կ. Տ.**

**Նվիրառու՝**

**Դ. Բաղդասարյան**

**Կ. Տ.**

**Հավելված N 3**

Շենքերի արտաքին լուսավորության ապահովման
դրամաշնորհի 2025թ.-ի մայիսի 21-ի
թիվ ՌՊ-01-2025 պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազ.դրամ)

| N | Միջոցառման անվանումը | Նվիրառուին վճարման ենթակա գումարները | | |
|---|---|---|---|---|
| | | առաջին կիսամյակ | ինն ամիս | Տարի |
| 1 | Շենքերի արտաքին լուսավորության ապահովում | 2,500.0 | 3,000.0 | 4,000.0 |

**Նվիրատու՝**

_____ Մ. Մարգարյան

Կ. Տ.

**Նվիրառու՝**

_____ Դ. Բաղդասարյան

Կ. Տ.

**Հավելված N 4**

Շենքերի արտաքին լուսավորության ապահովման
դրամաշնորհի 2025թ.-ի մայիսի 21-ի
թիվ ՌՊ-01-2025 պայմանագրի

**Նվիրատու՝**
Պետական գույքի կառավարման կոմիտե,
ՀՎՀՀ՝ 02528489,
հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
h/h 900011056943

**Նվիրառու՝**
«Ռիփաբլիք Պլազա» ԲԲԸ,
ՀՎՀՀ 02901389, հասցե՝
ք. Երևան, Նալբանդյան փողոց 28,
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
h/h 19300530264400:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N

**«___» _____ 2025թ.**

Պայմանագրի անվանումը՝ «Շենքերի արտաքին լուսավորության ապահովման դրամաշնորհի» պայմանագիր:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ _____.__ .2025թ.
Պայմանագրի համարը՝ ՌՊ-01-2025
Նվիրատուն, ի դեմս Պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղար Մարո Մարգարյանի, և Նվիրառուն, ի դեմս «Ռիփաբլիք Պլազա» բաց բաժնետիրական ընկերության տնօրեն Դավիթ Բաղդասարյանի, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ ___ .___. ի. 2025 թ.-ից մինչև ___ .___. 2025 թ. ժամանակահատվածում Նվիրառուն իրականացրել է վերը նշված պայմանագրով նախատեսված՝ ստորև թվարկած Միջոցառումները՝ պայմանագրով սահմանված ժամանակացույցում նշված ժամկետներում, իսկ դրանց արդյունքները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին.

| Լուսավորության ապահովման համար կատարված ծախսի նկարագիրը | Լուսավորության ապահովման համար կատարված ծախսի քանակական ցուցանիշները | Լուսավորության ապահովման համար կատարված ծախսի ժամկետները | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| Ընդամենը | ..... | ..... | | |

**Նվիրատու՝**

_____ **Մ. Մարգարյան**

**Կ. Տ.**

**Նվիրառու՝**

_____ **Դ. Բաղդասարյան**

**Կ. Տ.**

Հավելված N 5

Շենքերի արտաքին լուսավորության ապահովման
դրամաշնորհի 2025թ.-ի մայիսի ____ -ի
թիվ ՌՊ-01-2025 պայմանագրի

«ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ»

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ստորագրություն

# ՆԱԽԱՀԱՇԻՎ

**Բաց բաժնետիրական ընկերության կողմից բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող ծախսերի**
**01 հունվարի 2025թ.-20 դեկտեմբերի 2025թ.-ի ընկած ժամանակահատվածի համար**

1. Կազմակերպության անվանումը՝ **«Ռիփաբլիք Պլազա» ԲԲԸ**

2. ՀՎՀՀ **02901389**

3. Փոստային հասցեն **ք. երևան, Նալբանդյան 28**

4. Կազմակերպության տեղաբաշխման մարզի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման

5. ՀՀ պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը՝ ՀՀ **ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե**

6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ծածկագիր/բաժին, խումբ՝

7. Չափի միավոր՝ **(հազ. դրամ)**

| Տողերի NN | Ֆինանսատնտեսական գործունեության դրամական միջոցների գոյացման աղբյուրների և դրանց հաշվին իրականացվող ելքերի (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի) | | Առաջին եռամսյակ | Առաջին կիսամյակ | Ինն ամիս | Տարեկան |
|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումները | Տնտեսագիտականծածկագիրը | Հաստատված (ճշտված) նախահաշիվ | Հաստատված (ճշտված) նախահաշիվ | Հաստատված (ճշտված) նախահաշիվ | Հաստատված (ճշտված) նախահաշիվ |
| Ա | Բ | Գ | | 6.0 | 9.0 | 12.0 |
| 2000000 | I. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 2112000+տող 2113000) այդ թվում՝ | X | 0.0 | 2,500.0 | 3,000.0 | 4,000.0 |
| 2112000 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ որից՝ | X | 0.0 | 2,500.0 | 3,000.0 | 4,000.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| *2112300* | *2.3. Ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից* | *x* | 0,0 | 2 500,0 | 3 000,0 | 4 000,0 |
| 2112310 | 2.3.1. Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, այդ թվում՝ | 733100 | 0,0 | 2 500,0 | 3 000,0 | 4 000,0 |
| 2112311 | 2.3.1.1. պետական բյուջեից, այդ թվում՝ | x | 0,0 | **2 500,0** | 3 000,0 | 4 000,0 |
| 2112312 | 2.3.1.1.1. պետության կողմից պատվիրակված ծախսերի փոխհատուցում | x | **0,0** | **2 500,0** | **3 000,0** | **4 000,0** |
| **1000000** | **II. ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+ տող 4000000)** այդ թվում՝ | **X** | **0,0** | **2 500,0** | **3 000,0** | **4 000,0** |
| **1100000** | **Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ (տող 1110000)** այդ թվում՝ | **X** | **0,0** | **2 500,0** | **3 000,0** | **4 000,0** |
| **1120000** | **2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 1121000)** այդ թվում՝ | **X** | **0,0** | **2 500,0** | **3 000,0** | **4 000,0** |
| ***1121000*** | ***2.1. Շարունակական ծախսեր*** | ***x*** | **0,0** | **2 500,0** | **3 000,0** | **4 000,0** |
| 1121200 | - Էներգետիկ ծառայություններ | 421200 | 0,0 | 2 500,0 | **3 000,0** | **4 000,0** |

Կազմակերպության տնօրեն _____

(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____

(ստորագրություն)

"REPUBLIC PLAZA"
«ՌԻՓԱԲԼԻՔ ՊԼԱԶԱ»
"РИПАБЛИК ПЛАЗА"
02901389